

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՊԱԿԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԴՎԻՆՈՒՄ

Պրոֆ. Կ. Գ. ՂԱՆՍԻՄՅԱՆ

Մեր մի աշխատության մեջ համառոտ տեղեկություններ ենք հաղորդել 1937--1950 թթ. Դվինում պեղումների ժամանակ գտնված ապակե առարկաների մասին¹, սակայն այդ տեղեկություններն այժմ խիստ անբավարար են: Այն ժամանակ դեռևս քիչ առարկաներ էին գտնված, որոնց մասին միայն նախնական դիտողություններ ենք կարողացել անել, առանց գիտենալու այն մեծ դերը, որ ապակին ունեցել է Հայաստանի միջնադարյան մայրաքաղաքի տնտեսության մեջ: Հետագա քսանից ավելի տարիների ընթացքում կատարված պեղումների ժամանակ ի հայտ եկան հազարավոր առարկաներ, որոնցից մոտ 600-ը ամբողջական են կամ այնպիսի վիճակում, որ կարելի է գաղափար կաղմել նրանց ամբողջության մասին: Այժմ անհրաժեշտ է մեր գրածը վերանայել, լրացնել և ուղղել: Պեղածո նյութը միաժամանակ առաջադրեց նոր խնդիրներ և նոր հարցեր, որոնք ուսումնասիրողից պատասխան են պահանջում:

Որ միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքում արտագրվել և գործածվել են ապակե առարկաներ, 1952 թ. մեծ հայտնագործություն էր համարվում, որովհետև Դվինի պեղումներից առաջ ապակե առարկաների թիվն այնքան քիչ էր, որ առանձին ուսումնասիրության նյութ չէր կարող լինել, մանավանդ որ նրանց ոչ արտագրության տեղն էր հայտնի. և ո՛չ էլ դարը: Այդ հարցը այսօր էլ ընդհանուր առմամբ լուծված չէ ոչ միայն հայկական միջավայրում գործածված ապակու, այլև Առաջավոր Ասիայի նկատմամբ:

Հարցն այն է, որ մինչև այսօր ապակու տարբեր ուսումնասիրողներից յուրաքանչյուրն իր կարծիքն է հայտնել ապակու արտագրության կենտրոնի մասին, այն էլ առանց բավարար հիմքերի, ուստի և միմյանց հակասող և իրարամերժ կարծիքներ են առաջ եկել Առաջավոր Ասիայի, այդ թվում նաև Հայաստանի ապակեգործության վերաբերյալ:

Մեր կարծիքով սխալ են բոլոր այն ուսումնասիրողները, որոնք ապակու տեսակները կապում են միայն մի կենտրոնի հետ: Քանի որ առարկաների ճնշող մեծամասնությունը այլ երկրներում պատահական կերպով է ի հայտ եկել, և ոչ թե կոնոնավոր պեղումների ժամանակ, նրանց ծագման և ժամանակի որոշման հարցերը միշտ էլ կասկածելի են: Դվինի ապակին, ընդհակառակը, գրեթե առանց բացառության հայտնաբերվել է կանոնավոր կերպով կատարվող պեղումների հետևանքով և յուրաքանչյուր դեպքում ունի իր շերտի (դարաշրջանի) վերաբերյալ հաստատուն տվյալներ, մանավանդ որ նույն շերտում պտնվել են նաև իրենց թվականն ունեցող զրամներ: Այս հանդաման-

¹ Կ. Ղաճաղարյան, Դվին բազալը և նրա պեղումները, հատ. 1, Երևան, 1952, էջ 227—236:

քր կարող է որոշակի դեր խաղալ առարկաների պատրաստման ժամանակը որոշելու ընթացքում, սակայն դրանց բերովի լինելը կամ տեղական ծագում ունենալը մնում է անորոշ:

Դվինում ի հայտ եկած ապակեղենը առ այսօր հայտնի բոլոր վայրերի ապակե իրերից ավելի ուշ է ուսումնասիրվում. երբ շատ գիտնականներ ապակեգործության «համաշխարհային» այլ կենտրոններ են մատնացույց արել: Ուստի խիստ դժվար է Դվինին հատկացնել իր արժանավոր տեղը. դա հնարավոր է կատարել անհերքելի ապացույցներ գտնելուց հետո, երկար տարիների ուսումնասիրության միջոցով: Այս բոլորից անկախ, այժմ ապացուցված կարելի է համարել Դվինում ապակեգործության գոյությունը IX—XIII դդ.:

Դվինի պեղումներին վերաբերող մեր ուսումնասիրության I հատորում Հայաստանում ապակեգործության գոյությունը հաստատելու համար դիմել էինք գլխավորապես գրավոր տեղեկությունների օգնությանը և մեջ էինք բերել Երկու վկայություն, որոնցից մեկը վերաբերում էր III դարի վերջերին, իսկ երկրորդը՝ միջնադարին: Սակայն Դվինում հայտնաբերված ապակե առարկաների թիվը այժմ այնքան շատ է, որ գրավոր տեղեկությունները կարող են միայն օժանդակ նշանակություն ունենալ:

Ազաթանգեղոսը գրում է, որ Հոսիսիմյանց կույսերը «դային հասան էին յերկիրն Հայոց, յԱյրարատ դառու, ի Վաղարշապատ քաղաք, զոր և նորաքաղաքն կոչեն, ի նիստս թագաւորացն Հայոց: Այնուհետև եկեալ մտան էին ի հնձանայարկս այգևստանուոյն, որ կան շինեալ ի հիւսիսոյ յարևելից կուսէ. և կերակրէին ընչիւք իւրեանց ի վաճառաց քաղաքին. և ոչ ինչ այլ ինչ գոյր թոշակ ընդ նոսա զոր ունէին, բայց մի ոմն ի նոցանէ ունէր աւուեստ ապակեգործութեան՝ առնել ուլունս ապակեղենս և տալ դինս ընդ կերակրոյ աւուրն պարենի ոռճկի»²:

Երկրորդ գրավոր տեղեկությունը վերաբերում է միջնադարին: Բժշկական ձեռագիր բառարաններից մեկում ապակեգործության մասին կարգում ենք. «Ապակի (գրված է ապիկի) հո (հոմայերեն)՝ կաղմինայ, ադաբ (արաբերեն)՝ զուճաճ, պս (պարսկերեն)՝ ապկինայ: Աղեկն ի Սիս լինի: Ի Սիս որպէս աւազ կայ, կու հալեն այնտեղ ալ կու շինեն շատ ոք»³: Այս գրավոր վկայությունից կարելի է հետևել, որ Հայաստանում ապակեգործությունը բրուտի արհեստի նման տարածված է եղել, բայց լավագույնը Սիս քաղաքի ապակին է համարվել: Հասկանալի է, որ վկայությունը վերաբերում է ավելի ուշ ժամանակի: հավանաբար XIV կամ XV դդ., երբ Դվինը արդեն կործանված էր:


Ապակե անոթների նկարագրություններ շատ կան ալքիմիական ձեռագրերում: Այդ առարկաները օգտագործվել են նյութերի պահպանման, թորման և այլ գործողությունների ժամանակ, անգամ տրված են նրանց նկարները և անունները, որոնք գործ են ածվել հայերենում: Դվինում գտնված ապակե անոթներից շատերի քիմիական փորձանոթ լինելը հնարավոր չէ պարզել, բայց կան առարկաներ, որոնք միայն փորձանոթ կարող են լինել. դրանք առանց դժվարության տարբերվում են մյուսներից և բավական նման են ար-

² «Ազաթանգեղոսյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 84 (ընդգծումը մերն է—Կ. Դ.):

³ Տե՛ս Կ. Ղ ա ֆ ա դ ա ռ յ ա ն, Ալքիմիան պատմական Հայաստանում, Երևան, 1940, էջ 125:



н4. 1



н4. 2

դի փորձանոթներին: Մակայն կան և այնպիսիները, որոնք կարող են քիմիական նյութերի պահպանությանը ծառայած լինել (նկ. 1), բայց իրենց ձևերով ոչնչով չեն տարբերվում սովորական մեծ և վոբր ապակե տակաոթիկներից, որոնց մեջ հնում կարող էին պահել թթվումներ, ներկեր և այլ հեղուկ կամ շոր նյութեր, բայց նույն ձևի անոթները կարող էին ծառայել նաև այլ նպատակներին: Ընդ որ դեպքերում պետք է ենթադրել, որ այդ անոթները ընդհանուր առմամբ կերակուրի կամ այլ ուտելիքի շեն ծառայել, որովհետև մեղ ծանոթ են ալկոհոլային և ոչալկոհոլային խմիչքներ պահելու կամ գործածելու կավե և փայտե անոթների ձևերը: Նույն առարկաները ծառայել են նաև ղեղեր պատրաստելու և պահելու համար: Ապակուց են եղել ալքիմիկոսների օգտագործած ալամպիկ, պոտ և պաբպատ կոչվող անոթները, ինչպես նաև շատ այլ առարկաներ, որոնք ալքիմիական ձևագրերի մեջ հանդես են գալիս սովորական անուններով՝ ապիկի պուտուկ, ապիկի սալ, ապիկի կրխալ և այլն: Ձևագրերից մեկում, օրինակ, գրված է. «Քասդիտին (մաքրելուն, թորելուն, դտելուն) ծառայող վերին ամանն կամ ապիկի լիքնի, կամ ապիկած»: Այդ նշանակում է, որ թորելու ծառայող երկու անոթներից վերինը պետք է լինի ապակուց պատրաստած կամ ջնարակած կավից, որ հնում կոչվում էր ապիկած, այսինքն ջնարակած աման: Մի այլ ձևագրում ասված է, որ ալքիմիայի մեջ գործածվում են ութ տեսակ աման՝ ապակուց պատրաստած կամ կավից, բայց վերջինը պետք է լինի ջնարակած. «Եւ երկու ցեղ ամաններ՝ կամ ի հոգե, կամ ապիկե»⁴:

Դվինի ապակին պատրաստված է մի քանի եղանակներով: Կան բազմաթիվ առարկաներ, որոնք ազատ վիճելու եղանակով են ստացվել, բայց կան նաև իրեր, որոնք պատրաստված են կաղապարի մեջ, դարձյալ փչելու միջոցով: Դրանք հաճախ իրենց վրա ունենում են ուռուցիկ կամ փոս բնկած զարդաձևեր, որոնք ստացվել են կաղապարի պատերին արված զարդաձևերի հետևանքով: Որոշ անոթներ ունեն վերադիր մասեր և վերադիր զարդարանքներ: Շատ տարածված են եղել վերադիր զարդաթելերը, որոնք երբեմն իրար դուգահեռ ալիքաձև գծեր են կազմում կամ գոտիների նման անկյունագծեր: Հանդիպում են վերադիր վարդյակներ ունեցող անոթներ: Այս բոլորից անկախ կան նաև փորագիր կտրվածքով զարդաձևեր, ըստ որում հաստախեցի անոթները փորագրել են պատրաստելուց հետո: Դրանց փորագրություններն այնքան խճողված ու բարդ ձևեր չունեն, ինչպես մերօրյա բյուրեղապակե անոթները, և ոչ էլ այնքան մեծ առարկաներ են, ինչպիսիք այժմ են պատրաստում: Դրանք փորագիր անոթներ են՝ չափավոր գծազարդերով, որոնք խիստ հաճելի տպավորություն են գործում:


Դվինում գտնված ապակե կենցաղային առարկաների մեջ շատ են բաժականման լայնանիստ, ուղղահայաց պատերով թասերը, բավական հաստ խեցիով, որոնք ծառայել են իբրև գավաթներ գինու և օշարակների համար: Դրանցից շատերն իրենց կողերի վրա ունեն ներս բնկած կլոր կամ երկարավուն զարդաձևեր, որոնք առաջ են եկել կաղապարի մեջ եղած ուռուցիկ զարդերից (նկ. 2): Զգալի թիվ են կազմում մեծ և փոքր պանազան սրվակները, անոթները, որոնք ծառայել են քացախի կամ այլ հեղուկների համար: Կան

⁴ Նույն տեղում, էջ 131:

⁵ Նույն տեղում, էջ 72:

աղամաններ, անուշեղենի կողովածն զարդանոթներ, ապակե նրբախեցի բաժակներ, որոնց շրթները երբեմն ետ են ծաված և կամ ուղղակի կտրված են առանց լրացուցիչ մշակման:

Գտնված առարկաների թվում կան նաև ծանծաղ, բայց բավական մեծ շրջան կազմող կողերով թասեր, կիսազնդած թասեր, ունկավոր ու ունկ շունեցող մեծ և փոքր սալիորներ, բարձրադիր և փոքրիկ ձիթաճրագներ, աշտանակած իրեր և այլն: Պակաս չեն նաև դավերը, բմայանակները (նկ. 3) և այլն: Գտնվել են ամբողջական տափաշներ՝ նեղ բերանով և օղակավոր կախիկներով (նկ. 4), այդ թվում՝ նաև կավից պատրաստված: Դրանք, անշուշտ, գինվորներն ու ճանապարհորդներն են օգտագործել:




նկ. 3

Դիվինում գտնվել են նաև բավական մեծ տարողություն ունեցող լայնախոր, բայց նեղբերան ապակե անոթներ, որոնք հավանաբար ծառայել են քիմիական և բժշկական նյութեր պահելու համար: Մեզ լավ ծանոթ են բոլոր տեսակի այն կավե անոթները, որոնց մեջ պահել են գինին, օշարակները, բուսական և կենդանական յուղերը, սակայն հայտնի է, որ ոչ ոք ապակե այդքան մեծ անոթ չէր գործածում կենցաղային նպատակներով:

Ապակին դյուրարեկ է և շուտ փշրվող: Այդ է պատճառը, որ նա մեծ մասամբ գործածվել է այնտեղ, որտեղ արտադրվել է, իսկ եթե չի արտադրվել, նրա փոխարեն գործածություն մեջ են եղել կավանոթների տարբեր տեսակները: Հայտնի է, որ ապակին և սպիտակ կավից պատրաստված հախճապակին Դիվինում գտնվել են միջնաբերդի բնակելի տների աղբահորերի մեջ:

Այլ հարց է ապակե զարդերի խնդիրը, որոնք ամենուրեք հայտնաբերված են մեծ թվով՝ զլխավորապես ապարանջաններ, օղակածն մատանիներ, կախիկներ, խաչեր, կոճակներ, ուլունքներ, մանրուլունքներ: Հնում վերջինները հաղուստի վրա գանազան շարքեր էին կազմում և կամ գանազան բանվածքների ու գործվածքների վրա իրեն զարդ էին գործածվում: Դրանք կարող էին միջազգային առևտրի առարկա հանդիսանալ: Հայտնի է, որ երուսաղեմ ուխտ գնացողներն իրենց հետ բերում էին մեծ թվով ապակե զարդեր՝ ուլունքների շարաններ, ապակե ապարանջաններ, ականջօղեր և այլն, որ վերադարձին նվիրում էին իրենց մերձավորներին ու հարևաններին՝ որպեսզի իրենց այդ հեռավոր ճամփորդությունը շնորհակալ և յուրաքանչյուրի հիշողության մեջ վառ մնա: Ապակե այդ մանր զարդերի արտադրության վայրի հարցը պետք է իրեն առանձին խնդիր քննել: Հասկանալի է, որ այդպիսի առարկաներ կարող են երբեմն ավելի շատ հայտնաբերվել այն վայրերում, որտեղ դրանք գործածության մեջ են եղել, քան այն տեղերում, որտեղ արտադրվել են:

Վերևում մեր ասածներից չպետք է եզրակացնել, թե բոլորովին ժխտում ենք Գլինի տնտեսական և ղեղարվեստական ապակու որոշ տեսակների ներմուծված լինելը: Կան հատուկներ ապակե առարկաներ, որոնք գտնվել են Գլինում, բայց տեղական չեն: Օրինակ, 1960 թ. Գլինի միջնաբերդի հորերից մեկում, բազմաթիվ առարկաների հետ միասին, գտնվել է գունազարդված և պատկերավոր մի նեղբերան զարդանոթ, որի վրա պատկերված է ջութակ




նկ. 4

նվազող մի մարդ. վերջինս ջութակը դրել է ուսին և նվազում է ճիշտ այնպես. ինչպես եվրոպացիք են նվազում (նկ. 5): Պարզ է, որ դա տեղական ծագում չունի և բյուզանդական է, քանի որ արևելյան երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, ջութակը նվազում էին ուղղահայաց դիրքով ծնկի վրա հենած: Եթե այդ առարկան բյուզանդական չէ, ապա պետք է ենթադրել, որ արտադրվել է Հայաստանի այն մասերում, որոնք գտնվում էին բյուզանդիայի ազդեցության ներքո: Բոլոր դեպքերում, ջութակ նվազողի պատկերով այդ բացառիկ առարկան արժեքավոր է բնոճանուր հնագիտության համար:

Օտար ծագում ունի նաև կաղապարի մեջ անշմամբ պատրաստած հատիկավոր ապակե ծանձաղ և փոքրագիր պնակներից մեկը, որ եղակի օրինակ է 6 Հանդես, № 4

Դժվինում, եթե հաշվի չառնենք նման մի անոթի երկու փոքրիկ բեկորները: Այդ տիպի առարկաներ հայտնի են մի շարք այլ երկրներում: Նման առարկաների պատրաստման եղանակը բոլորովին ուրիշ է. ապակե կլորակներ են պատրաստում, որոնք լցնում են կաղապարի մեջ և ջերմության տակ սեղմում կա-



նկ. 5

ղապարի մյուս կեսով: Ապակու կլորակ հատիկները, որոնք երկգույն են լինում (օրինակ՝ միջուկը սպիտակ և արտաքին երեսը մուգ դույնի), անոթի մեջ կլորակ իրանը են առաջացնում⁶: Ուսումնասիրողների կարծիքով այդ երկու անոթներն էլ պատկանում են XI դարին (նկ. 6):

⁶ Պատրաստման եղանակի մասին տե՛ս «Archæology» հանդես, 1959, № 1:

Դվինի միջնադարյան ասպակին բոլոր ուսումնասիրողներն իրավամբ վերագրում են IX—XIII դդ., ըստ որում քաղաքի կենտրոնական թաղում գտնվածները ավելի հին են, քան միջնաբերդի հորերում ի հայտ եկածները: Այդ երևույթը նկատելի է նաև ինչպես դրամների, այնպես էլ ջնարակած խեցանոթների և այլ առարկաների նկատմամբ: Հարցն այն է, որ Դվինի միջնաբերդի շենքերը, առանց բացառության, կործանվել են 893 թ. մեծ երկրաշարժի ժամանակ, և սլալատական հին շենքերի փլատակների տեղում բաղմամբիվ շենքեր են կառուցվել, որոնց հորերից ի հայտ են դալիս միջնադարյան անոթներն ու նրանց բեկորները: Այս շենքերն ավերվել են քաղաքի վերջնական կործանման ժամանակ՝ XIII դարում: Հետևապես այդ շերտի մեջ գտնված առարկաները, եթե շերտը խաթարված չէ, սլատկանել են IX դարի վերջերից սկսած մինչև XIII դարի կեսերին: Այդ նույն դարերին պետք է վերագրել նաև այնտեղ գտնված ասպակին:



նկ. 6

Ավելի մանրադնին քննությունները հնարավորություն են տալիս նաև այս դարերին սլատկանող ասպակու հին օրինակները տարբերել ավելի ուշ ժամանակի օրինակներից և շատ առարկաների սլատրաստման ժամանակը ավելի որոշակի դարձնել⁷:

Մեր ուսումնասիրությունները բերում են այն եզրակացության, որ Հայաստանի միջնադարյան ասպակեգործության գլխավոր կենտրոններից մեկը IX—XIII դդ. եղել է Դվին քաղաքը: Գտնված հազարավոր առարկաները ցույց են տալիս, որ ասպակե իրերի ձևչող մեծամասնությունը տեղական ծագում ունի, իսկ ներմուծված առարկաների թիվը սահմանափակ է եղել: Գրավոր աղբյուրներից իմանում ենք, որ Դվինի կործանումից հետո ասպակեգործությունը Հայաստանում շարունակվել է, ըստ որում տեխնիկական ասպակու լավագույն տեսակը արտադրվել է Կիլիկիայի Սիս քաղաքում: Միաժամանակ սլարգ է դառնում, որ ասպակեգործությունը Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ կարևոր տեղ է գրավել:

7 Այդ առթիվ տե՛ս Հ. Զ ա ն փ ո լ ա դ յ ա ն, Դվինի միջնադարյան ասպակին, Երևան, 1974:

СРЕДНЕВЕКОВОЕ СТЕКЛОДЕЛИЕ В ДВИНЕ

Проф. К. Г. КАФАДАРЯН

(Резюме)

Изучение найденных во время раскопок города Двина стеклянных предметов приводит к заключению, что в IX—XIII вв. главным центром стеклоделия в Армении был Двин. Раскопками 1951—1972 гг. выявлено более 600 предметов, подавляющее большинство которых—местного производства. Среди найденных изделий имеется небольшое количество привозных стеклянных предметов. В указанный период наравне с керамическими важную роль в ремесленном производстве Двина играли также стеклянные изделия. После падения Двина производство последних продолжалось в киликийском городе Сис (XIV—XV вв.).